ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

Հոդված 10. Ռեկտորի լիազորությունները

1. Ռեկտորը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս Ակադեմիայի անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Խորհրդի որոշումներով և Կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Ակադեմիայի գույքը, ներառյալ՝ ֆինանսական միջոցները.

3) տալիս է Ակադեմիայի անունից հանդես գալու լիազորագրեր, ներառյալ՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

4) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում Ակադեմիայի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

5) համապատասխան քաղաքացիաիրավական կամ աշխատանքային պայմանագրեր է կնքում Ակադեմիայում դասավանդման գործընթացին ներգրավված անձանց հետ.

6) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

7) օրենքով և Կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կայացնում է որոշումներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

8) կազմակերպում է Ակադեմիայում ուսումնական գործընթացը.

9) կազմակերպում է Խորհրդի որոշումների կատարումը.

10) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ակադեմիայի ներքին կարգապահական կանոնները, ինչպես նաև հաստիքացուցակն ու աշխատողների պաշտոնային դրույքաչափերը.

11) հրապարակում է Ակադեմիայի գործունեության տարեկան հաշվետվությունը.

12) կազմակերպում է քննական հարցերի կազմումը և ապահովում դրանց գաղտնիության պահպանումը.

13) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ակադեմիայի տարեկան ծախսերի նախահաշիվը (բյուջետային հայտը).

14) Ակադեմիայում ուսումնառության ընթացքում դատավորների թեկնածուների հավակնորդների, դատավորների թեկնածուների, քննիչների, հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների կամ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձի կողմից համապատասխանաբար դատավորի, քննիչի կամ դատախազի վարքագծի կանոնների ենթադրյալ խախտում պարունակող արարքների վերաբերյալ տեղեկությունների տիրապետման դեպքում այդ մասին հայտնում է համապատասխանաբար Դատավորների ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողովին, քննչական կոմիտեի նախագահին, հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին կամ գլխավոր դատախազին.

14.1) «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 109-րդ հոդվածի 10-րդ մասով և 124-րդ հոդվածի 12-րդ մասով սահմանված դեպքերում Ռեկտորը որոշում է կայացնում դատավորների թեկնածուների հավակնորդների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձի ուսուցումն Ակադեմիայում կասեցնելու, իսկ կասեցման համապատասխան հիմքերը վերանալու դեպքում՝ ուսուցումը վերսկսելու մասին.

15) իրականացնում է սույն օրենքով և իրավական այլ ակտերով իրեն վերապահված այլ լիազորություններ:

Հոդված 14. Ակադեմիայի ունկնդիրները

1. Ակադեմիայի ունկնդիրներն (այսուհետ՝ ունկնդիր) են՝

1) դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկված անձինք.

1.1) «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 123-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետով նախատեսված անձինք, որոնք ընդգրկված են Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար դատավորների առաջխաղացման ցուցակում.

2) դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձինք, այդ թվում՝ «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38.1-ին հոդվածով սահմանված կարգով դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձինք, բացառությամբ «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով Ակադեմիայում ուսումնառությունից ազատված անձանց.

3) դատավորները, քննիչները, հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք, դատախազները, դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձինք, դատական ծառայողները, քննչական կոմիտեի քաղաքացիական ծառայողները, դատախազությունում պետական ծառայողները և դատական կարգադրիչները.

4) քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձինք, բացառությամբ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ուսումնառությունից ազատված անձանց, ինչպես նաև հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձինք, բացառությամբ «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում Ակադեմիայում ուսումնառությունից ազատված անձանց:

~~2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված ունկնդիրներն Ակադեմիայում մասնագիտական պատրաստման ընթացքում ստանում են ընդհանուր իրավասության դատարանի նիստերի քարտուղարի վարձատրությանը համապատասխան կրթաթոշակ:~~

3. Վերապատրաստման ընթացքում սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված ունկնդիրներն ազատվում են իրենց պաշտոնեական պարտականությունների կատարումից՝ վարձատրության իրավունքի պահպանմամբ:

~~4. Վերապատրաստման վայրից դուրս մշտապես բնակվող սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված ունկնդիրներին Ակադեմիան պետական բյուջեի միջոցների հաշվին տալիս է տրանսպորտային, գիշերավարձի և այլ ծախսերի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցում կամ կազմակերպում նրանց փոխադրումն ու բնակության ապահովումը:~~

4. Վերապատրաստման վայրից դուրս մշտապես բնակվող սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված ունկնդիրների համար Ակադեմիան, հնարավորության դեպքում, կազմակերպում է նրանց բնակության ապահովումը:

Հոդված 16. Ունկնդրի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը

1. Դատավորների թեկնածուների հավակնորդների, դատավորների թեկնածուների ցուցակներում կամ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված մասնագիտական պատրաստում անցնող ունկնդիրը կարող է Ռեկտորի ներկայացմամբ Խորհրդի կողմից ենթարկվել կարգապահական պատասխանատվության Ակադեմիայի

ներքին կարգապահական կանոնները խախտելու կամ ուսումնական դասընթացներից անհարգելի պատճառով բացակայելու համար:

1.1. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց կարգապահական տույժի է ենթարկում քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը՝ Ռեկտորի ներկայացմամբ՝ սույն հոդվածով սահմանված կարգով:

1.2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածուներին կարգապահական տույժի է ենթարկում հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը՝ ռեկտորի ներկայացմամբ՝ սույն հոդվածով սահմանված կարգով:

2. Կարգապահական տույժերի տեսակներն են՝

1) նախազգուշացում.

2) նկատողություն~~, որը գուգորդվում է՝ մինչև 3 ամիս ժամկետով կրթաթոշակի 25 տոկոսից զրկելով~~.

3) խիստ նկատողություն~~, որը գուգորդվում է՝ մինչև 6 ամիս ժամկետով կրթաթոշակի 25 տոկոսից զրկելով~~.

4) ունկնդրին դատավորների թեկնածուների հավակնորդների, դատավորների թեկնածուների ցուցակներից, քննիչների, հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակից կամ դատախազների թեկնածությունների ցուցակից հանելու միջնորդությամբ համապատասխանաբար Բարձրագույն դատական խորհրդին, քննչական կոմիտեի նախագահին, հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին կամ գլխավոր դատախազին դիմելու մասին:

3. Ունկնդրին Խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգի նկատմամբ տարածվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները:

4. Ունկնդրի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս Խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, ունկնդրի անձը, առկա կարգապահական տույժերը, ունկնդրին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

5. Խորհուրդը, ունկնդրին կարգապահական տույժի ենթարկելու հարցը քննարկելով, կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

1) կարգապահական տույժ կիրառելու հարցի քննությունը կարճելու մասին.

2) ունկնդրին սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված տույժերի ենթարկելու մասին:

6. Խորհուրդը կարճում է ունկնդրին կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ հարցի քննությունն այն դեպքում, երբ՝

1) առկա չէ ունկնդրին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք.

2) կարգապահական տույժ կիրառելու հարցի քննությունն իրականացվում է սույն օրենքով նախատեսված ժամկետների խախտմամբ, եթե ունկնդիրը համաձայն է հարցի քննության կարճմանը նշված հիմքով:

7. Կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով Խորհուրդը պետք է որոշում կայացնի հարցը Խորհրդի քննարկմանը ներկայացնելու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում՝ չհաշված ունկնդրի հիվանդության պատճառով հարցի քննության անհնարինության ժամանակահատվածը:

8. Կարգապահական տույժը նշանակվում է, եթե երեք ամսից ավելի չի անցել կարգապահական խախտման հայտնաբերման օրվանից՝ չհաշված ունկնդրի հիվանդության պատճառով հարցի քննության անհնարինության ժամանակահատվածը:

9. Կարգապահական տույժ նշանակվել չի կարող, եթե վեց ամսից ավելի է անցել կարգապահական խախտումը կատարելու օրվանից:

10. Կարգապահական տույժի մասին ունկնդրին հաղորդվում է ոչ ուշ, քան կարգապահական տույժ նշանակելու օրվան հաջորդող եռօրյա ժամկետում:

11. Կարգապահական յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ:

12. Եթե ունկնդիրը կարգապահական տույժ նշանակելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա նա համարվում է կարգապահական տույժի չենթարկված:

~~13. Եթե ունկնդիրը հաջորդաբար ենթարկվել է կարգապահական տույժերի, որոնք առաջացնում են կրթաթոշակի իջեցում, ապա կրթաթոշակի ընդհանուր իջեցումը յուրաքանչյուր ամիս չի կարող գերազանցել կրթաթոշակի 50 տոկոսը:~~

14. Ունկնդիրը կարող է սույն հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժը նշանակելու մասին Խորհրդի որոշումը բողոքարկել վարչական դատարան՝ որոշումը ստանալու օրվան հաջորդող երկշաբաթյա ժամկետում: